ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեմա՝** Ներառական կրթության իրականացման առանձնահատկություններն ու առկա դժվարությունները

**Հետազոտող ուսուցիչ՝** Նոննա Սեյրանյան
Աբովյանի կրթահամալիր

ԵՐԵՎԱՆ 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Ներառական կրթության իրականացման առանձահատկությունները

և առկա դժվարությունները……5

Եզրակացություն……15

Գրականության ցանկ……16

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհում ավելի քան մեկ միլիարդ մարդ ապրում է այս կամ այն տեսակի հաշմանդամությամբ: Նրանցից շատերը կյանքի և գործունեության ընթացքում առնչվում են զգալի դժվարությունների հետ. բացասական վերաբերմունք, խտրականություն, առողջապահական, կրթական, զբաղվածության, տրանսպորտային և տեղեկատվական ծառայությունների անմատչելիություն և այլն, որի հետևանքով մարդը մեկուսանում է հասարակությունից: Իհարկե, այդ մարդիկ քաղաքակիրթ աշխարհում ունեն հասարակության մեջ ապրելու և իրենց կենսագործունեությունը լիարժեք ծավալելու իրավունք, որից բխում է նաև, որ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»:

Այդ իսկ պատճառով Հայաստանի Հանրապետությունը, քաղաքակիրթ աշխարհի մյուս երկրների պես, ստեղծել և անընդհատ փորձում է կատարելագործել մտավոր և ֆիզիկական առողջության խնդիրներ ունեցող քաղաքացիների ազատ գործունեությունը կարգավորող օրենսդրական փաստաթղթեր, ինչպես նաև վերջիններիս համար ազատ տեղաշարժվելու, հասարակական ծառայություններից օգտվելու, կրթություն ստանալու լավագույն և հնարավորինս հարմարավետ պայմաններ: 2005թ. մայիսի 25-ին Հայաստանի Հանրապետությունում ընդունվեց օրենք, որը կանոնակարգում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման բնագավառում հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ կրթության համակարգի օրենսդրության մեջ ամրագրվել են դրույթներ, ըստ որոնց՝ առանձնահատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար պայմաններ են ստեղծվում միջնակարգ հանրակրթական հաստատություններում՝ իրականացնելով ներառական կրթության ծրագրեր:

Ներառական կրթությունը՝ որպես ներառման քաղաքականության բաղկացուցիչ, հոգ է տանում հատկապես այն սովորողների մասին, ովքեր հաճախ զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից՝ նկատի ունենալով հատուկ

կարիքներով սովորողներին, հաշմանդամներին, էթնիկ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին և այլոց:

Այս ամենով էլ պայմանավորված՝ թեման համարվում է արդիական:

Ուսումնասիրության օբյեկտ է համարվում ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները:

Ուսումնասիրության նպատակն է ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում ներառական կրթության իրականացման ընթացքում առկա դժվարությունները:

Աշխատանքի կառուցվածքը. այն բաղկացած է ներածությունից, տեսական և հետազոտական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

# ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԱՌԿԱ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից մանկավարժության մեջ նշանակալից է դառնում անձի զարգացման միջավայրային մոտեցումը: Այստեղ առաջնային է այն գաղափարի ընդունումը, որ մարդը ձևավորվում է խմբակցության մեջ և դրա միջոցով: Եթե սովորողը գտնվի կրթական այնպիսի տարածքում, ուր խրախուսվում է սոցիալական համերաշխությունը, ներդաշնակությունը, փոխադարձ հարգանքը, ապա ինքն էլ կսովորի ապրել խաղաղ, առանց հակասությունների՝ միաժամանակ պահպանելով սեփական դեմքը և յուրակերպությունը: Ելնելով այս ամենից՝ ներառական կրթությունը դառնում է ժամանակակից մանկավարժության բաղկացուցիչ մասերից:

2005թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումով սահմանվեց «ներառական կրթություն» հասկացությունը: Համաձայն նշված օրենքի՝ «Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»[1]:

Ներառական կրթությունը հանդես է գալիս որպես սովորողների սոցիալականացման, աշխարհին իր բազմատեսակ ու բազմաբովանդակ հարաբերություններով ճանաչելու, նրանց շարժունակությունը զարգացնելու ուղիներից մեկը: Փոխշփումները պայմաններ են ստեղծում յուրաքանչյուր երեխայի անձի հուզական զարգացման և նրա կողմից շրջապատող իրականությունն առավել ամբողջական ու իմաստավորված ընկալելու համար:

Ներառական կրթության պայմաններում ուսուցչից պահանջվում է հատուկ ընդունակություններ: Նա պետք է կարողանա հասկանալ երեխային, ժամանակին խրախուսել, աջակցել, ոգևորել և ընդգրկել փոխհարաբերությունների մեջ: Դրան հնարավոր է հասնել միայն այն դեպքում, եթե ուսուցիչը հիմնվի սովորողի առողջ և ուժեղ կողմերի վրա, միաժամանակ կարողանա օգնել և պահանջել, օժանդակել ու

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166

տալ ինքնուրույն գործելու հնարավորություն, ուշադրությունը կենտրոնացնել սովորողի ոչ թե բացթողումների և թերությունների, այլ ձեռքբերումների վրա:

Ներառական կրթության հաջողության գրավականն է՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին հասկանալը, ապրումակցելը և, անկախ նրա հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկությունների արտահայտման աստիճանից ու ուսումնական հաջողություններից՝ նրա արժեքը անվերապահորեն ընդունելը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային ներառելով հանրակրթության մեջ՝ դպրոցը պետք է լուծի բազմաբնույթ խնդիրներ՝ սկսած երեխայի կրթական կարիքների գնահատումից մինչև պետական չափորոշիչներին համապատասխան նրա գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման համար անհրաժեշտ պայմանների և կրթության որակի ապահովումը: Առաջադրված խնդիրների արդյունավետ լուծման համար ներառական կրթություն իրականացնող դպրոցում անհրաժեշտ է ապահովել անձնակազմի և ներառական կրթությունը կազմակերպող աշխատանքային թիմի արդյունավետ համագործակցություն: Կարևոր է գիտակցել, որ ներառական կրթությունը բոլոր երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրացման գործընթաց է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային ու համայնքային կյանքին: Ներառումը ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության, մոտեցումների, կառույցների և մեթոդական համակարգի մեջ: Ներառական կրթությունը ելնում է այն համոզմունքից, որ բոլոր երեխաներին կրթելը կրթական համակարգի պարտականությունն է: Փաստ է, որ առանձնացված հատուկ դպրոցներում երեխաներին ուսուցանելը, մեղմ ասած, չի նպաստում ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցություն ունենալու նրանց իրավունքի իրացմանը: Չնայած հատուկ դպրոցների կրթական ծառայությունների որոշ առավելություններին՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հասարակությունից խոչընդոտում է հասարակության մեջ նրանց լիարժեք ինտեգրմանը:

Ներառումը հանրակրթական դպրոցներ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալու իրենց համայնքներում և չմեկուսանալ՝ բացառելով նրանց նկատմամբ հաճախ դրսևորվող խտրական վերաբերմունքը:

Ներառական կրթություն իրականացնողներն առաջնորդվում են մի գաղափարախոսությամբ, որը բացառում է երեխաների նկատմամբ ցանկացած խտրականություն, ապահովում հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, ստեղծում հատուկ պայմաններ հատուկ պահանջմունքներ ունեցող երեխաների համար: Այսպիսով, ներառական կրթությունը.

1. ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել,
2. ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն,
3. նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը,
4. նպաստում է ներառական հասարակության կառուցման հեռահար ռազմավարական գաղափարի իրականացմանը,
5. դինամիկ և զարգացող գործընթաց է:

Իրականացնելով ներառական կրթություն՝ հանրակրթական դպրոցների ղեկավարները և մանկավարժները, ինչպես նաև մյուս բոլոր աշխատողները պետք է նկատի ունենան, որ կրթության մեջ ներառումը ենթադրում է.

- բոլոր սովորողների կրթական կարիքների հավասար գնահատում,
- ուսումնական, մշակութային, համայնքային միջոցառումներին սովորողների ներգրավվածության աստիճանի բարձրացում,
- դպրոցների վարած քաղաքականության վերակառուցում և դրա համապատասխանեցում սովորողների բազմազանությանը և առանձնահատկություններին,
- ուսուցման գործընթացում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր սովորողների ներգրավում,

- խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռքբերում, որը կոչված է ապահովելու որոշակի սովորողների մասնակցությունն ուսումնական գործընթացին՝ սովորողների համար ավելի մեծ բարեփոխումների ակնկալիքով,
- սովորողների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդության, այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում,
- սեփական համայնքում կրթություն ստանալու սովորողների իրավունքի ապահովում,
- ինչպես դպրոցի աշխատակազմի, այնպես էլ սովորողների համար ուսումնական պայմանների բարելավում,
- արժեքների ձևավորման ու զարգացման, ինչպես նաև նվաճումների մեծացման գործում դպրոցների դերի կարևորում,
- կրթությունը որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն գործոնի ճանաչում:

Ներառական կրթության կազմակերպումը հանրակրթական ուսումնական հաստատություններում ենթադրում է ոչ միայն ընդհանուր հայեցակարգի սահմանում և ընդունում, այլև համապատասխան գործողությունների հստակ պլանավորում:

Ներառական կրթության կազմակերպման հաջող փորձը ցույց է տալիս, որ գործընթացը սկսելիս պետք է հաշվի առնել երեք հիմնական գործոն կամ բաղադրիչ.

ա. հստակ սահմանված արժեքների, համոզմունքների, սկզբունքների ամբողջություն, որոնք զարգանում են ներառական կրթության իրականացման ողջ ընթացքում,

բ. ուսումնական հաստատության բոլոր ռեսուրսների(մարդկային, ֆինանսական, բարոյական) արդյունավետ ու նպատակաուղղված օգտագործում,

գ. համատեղ (դպրոց, ծնող, կրթության կառավարման պետական լիազորված մարմին) մշտադիտարկում՝ ներառական կրթության որակն ու ճկունությունն ապահովելու և համակարգում կատարվող փոփոխություններին արագ արձագանքելու նպատակով:

Ներառական կրթության իրականացման փուլում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման կազմակերպման և արձանագրման (անհատական ուսումնական պլաններ) մեխանիզմների մշակման, նրա՝ պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքների յուրացման, կարողությունների, հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով իրականացվում են հետևյալ քայլերը.

1. առաջին աստիճանի գնահատում. կատարվում է դպրոցում՝ դպրոցի մանկավարժական ներուժի միջոցով՝ ներգրավելով ծնողին և այլ մասնագետի[6]: Իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի դիտարկում և հետազոտում: Դիտարկումը և հետազոտումը կատարվում է դասապրոցեսում, դասամիջոցներին, բակում, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մասնագետը կատարում է տնայց,
2. երկրորդ աստիճանի գնահատումը կատարվում է տարածքային մանկավարժահոգեբանական ծառայության կողմից[2]:
3. երրորդ աստիճանը կատարվումէ հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից:
4. երեխայի կարիքի գնահատման արդյունքներից ելնելով՝ կազմվում է ուսուցման անհատական պլան, սովորողների հետ կատարվող անհատական և խմբային աշխատանքների ժամանակացույցը, որոնց համաձայն յուրաքանչյուր մասնագետ իրականացնում է իր գործունեությունը:

Աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով շատ կարևոր է բազմամասնագիտական խմբի և մանկավարժական կոլոկտիվի փոխհարաբերությունների և համատեղ աշխատանքի կազմակերպումը: Անհրաժեշտ է դպրոցի ողջ մանկավարժական համակազմին ծանոթացնել ներառական կրթության նպատակների և բովանդակության հետ՝ պարբերաբար կազմակերպելով սեմինար պարապմունքներ:

[2] Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. – Երևան, 2018, էջ 27-28

Դպրոցում ներառական կրթություն իրականացնում է ոչ միայն բազմամասնագիտական խումբը, այլ նաև ամբողջ մանկավարժական կոլեկտիվը, որի համատեղ ջանքերով պետք է ներառական կրթություն իրականացնող դպրոցում ապահովել համապատասխան ուսումնանյութական միջավայր:

Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունը պետք է հարմարեցված լինի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների բոլոր կարիքներին ու առանձնահատկություններին: Ֆիզիկական միջավայրը պետք է լինի առանց խոչընդոտների և ապահովի հավասար մատչելիություն բոլոր սովորողների համար՝ դպրոցական կյանքին մասնակցելու, իրենց ներուժը զարգացնելու, կրթական և այլ ծառայություններից օգտվելու համար: Առանց խոչընդոտների ֆիզիկական միջավայրը ներառում է թեքամուտքեր, թեքահարթակներ շենքի ներսում, ամբարձիչ կամ վերելակ, համապատասխան գույքով և ուսուցողական պարագաներով հագեցած աշխատասենյակներ և դասասենյակներ, այլ տարածքներ:

Ուսումնանյութական մատչելի միջավայր ստեղծելու համար պետք է գործել համատեղ ջանքերով (պետություն, դպրոց, ծնող, հասարակություն)՝ իրագործելով գլխավոր նպատակը՝ հանրակրթության մեջ չներառված երեխային բերել դպրոց, իսկ սովորողին հնարավորություն տալ արագ ընդգրկվել համատեղ ուսումնառության մեջ և համապատասխան կրթություն ստանալ ըստ կրթական պահանջների:

Ուսումնանյութական միջավայրի հարմարեցման աշխատանքների իրականացմանը ուղղվում են բյուջետային և արտաբյուջետային միջոցները:

Ուսումնանյութական միջավայրի հարմարեցման աշխատանքների իրականացմանը մեծապես նպաստում է դպրոցի մանկավարժական աշխատողների, ծնողների, սովորողների կամավոր աշխատանքը կամ ներդրումը:

Ներառական կրթություն իրականացնելու համար պետք է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները.

1. դպրոցամերձ տարածքի հարմարեցում, դպրոցական շենքի ընդհանուր օգտագործման և ուսումնական տարածքների վերակառուցում,
2. ուսումնական սարքավորումների և նյութերի ձեռքբերում,
3. մանկավարժական աշխատողների վերապատրաստում:

Եվ վերջապես, ներառական դպրոցների ստեղծումը շահեկան է հետևյալ պատճառներով.

- Կրթության տեսանկյունից. Ներառական դպրոցին ուղղված բոլոր երեխաների համատեղ ուսուցման պահանջը մղում է ուսուցման նոր ուղիների որոնման, որոնք կհամապատասխանեն բոլոր երեխաների պահանջներին՝ անկախ առանձնահատկություններից և դրանցով պայմանավորված հիմնախնդիրներից:
- Այն շահեկան է նաև սոցիալական առումով: Նմանատիպ ինտեգրված դպրոցներն ունակ են փոխելու հասարակության վերաբերմունքը սոցիալական անհավասարության և խտրականության հանդեպ, բոլոր երեխաներին միասին ուսուցանելու ճանապարհով նրանք կարող են ձևավորել արդար, խտրականությունից զերծ հասարակության ստեղծման հիմքերը:
- Ներառական դպրոցների ստեղծումն արդարացվում է նաև տնտեսական տեսանկյունից: Անհամեմատ մատչելի է հիմնել և պահել համատեղ ուսուցմամբ դպրոցներ, քան ստեղծել տարբեր խմբերի երեխաների համար մասնագիտացվող տարբեր տիպի դպրոցական համալիրներ:

Այսպիսով, ներառական կրթությունը մարդու իրավունք է. այն կարող է ապահովել լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է: Ներառական կրթության իրականացման անհրաժեշտությունը հիմնված է հետևյալի վրա.

Իրավունքի առումով.

1. Բոլոր երեխաները միասին սովորելու իրավունք ունեն:
2. Երեխաներին չի կարելի թերարժևորել կամ նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերել հաշմանդամության կամ սովորելու դժվարություններ ունենալու պատճառով:
3. Հաշմանդամ մեծահասակները, որոնք ժամանակին սովորել են հատուկ դպրոցներում, այսօր արդեն պահանջում են վերջ տալ խտրականությանը:
4. Երեխաներին տարատեսակ դպրոցներում միմյանցից առանձնացնելու օրինական պատճառներ չկան: Երեխաները պետք է սովորեն միասին. դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ առանձնացնել նրանց միմյանցից:

Կրթության որակի առումով.

5. Հետազոտությունները ցույց են տալիս, որ ակադեմիական և սոցիալական առումներով, երեխաներն ավելի լավ արդյունքների են հասնում ներառական կրթության դեպքում:
6. Հատուկ դպրոցում չկա այնպիսի բան, որ չի կարելի անել հանրակրթական դպրոցում:
7. Նվիրվածության և աջակցության դեպքում ներառական կրթությունը ուսումնական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործումն է:

Սոցիալական հարցերի առումով.

8. Խտրականությունը երեխաների մեջ սերմանում է վախ, տգիտություն, նախապաշարումներ, չարություն:
9. Բոլոր երեխաները զգում են կրթության կազմակերպման այնպիսի ձևի կարիք, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել բոլորի հետ և պատրաստվել հասարակական կյանքին:
10. Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Այնուամենայնիվ, որքան էլ տեղեկացված և ուսումնասիրած լինենք որևէ նոր երևույթ, ցանկացած նորարարություն իր ներդրման, զարգացման, կայացման ճանապարհին հանդիպում է բազմաթիվ դժվարությունների և խնդիրների:

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի մինչև 2025 թվականը նախատեսվում է, որ Հայաստանը անցում կկատարի ամբողջական և համընդհանուր ներառական կրթության համակարգի[3]:

Մեր հանրակրթական դպրոցներում ներառական կրթության ներդրման օրից մինչ օրս կատարվել է հսկայական աշխատանք ծրագիրն արդյունավետ իրագործելու, ճիշտ ուղով ընթանալու, ներառման հստակ քաղաքականություն վարելու ուղղությամբ, սակայն խնդիրներն ու դժվարություններն անխուսափելի էին:

Ներկայացնենք տարբեր հետազոտությունների ընթացքում բացահայտված խնդիրներն ու դժվարությունները:

[3] Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. – Երևան, 2018, էջ 25

1. Ներառական դպրոցները չունեն ներքին հարմարեցվածություն:

Թեքահարթակներ պետք է լինեն շենքից դուրս և ներս, սակայն հիմնականում այն կարող ենք տեսնել դպրոցի առաջին հարկում: Ոչինչ նախատեսված չէ այն երեխայի համար, որն ունի հենաշարժողական խնդիրներ ու իր դասասենյակը գտնվում է 3-րդ հարկում: Որոշ երեխաներ հրաժարվում են դպրոց հաճախել հենց նման խնդիրների պատճառով: Այսօր ներառական դպրոցներ հաճախում են հիմնականում թեթև խնդիրներ ունեցող երեխաները:

2. Ներառական դպրոցներում (ՆԴ) սանհանգույցները հարմարեցված չեն: Հիմնականում տիպային դպրոցական սանհանգույցներ են:

3. ՆԴ-ը չունեն հարմարեցված սպորտդահլիճներ և մասնագետ-ուսուցիչներ, ովքեր կաշխատեն ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ:

4. ՆԴ-ի առանձնահատուկ դասասենյակները հարմարեցված չեն, ապահովված չեն անհրաժեշտ գույքով :

Մինչդեռ ուսուցիչների կարծիքով, անհրաժեշտ է, որ դասասենյակը, որտեղ մասնագետ-ուսուցիչները աշխատում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, լինեն լուսավոր ու պայծառ, սեղան-աթոռները հարմար լինեն, հարամարեցված աշխատանքային պարագաներ լինեն, որպեսզի խաղերի, տարբեր պատկերների միջոցով ավելի մատչելի ու հաճելի լինի աշակերտների համար դաս սովորելը:

5. Առարկաների ուսումնական պլանի մշակում

Այս պլանը պետք է կազմվի յուրաքանչյուր աշակերտի համար անհատապես՝ մասնագետ-ուսուցիչների, ծնողների հետ համատեղ, սակայն այդ կապը թույլ է. ծնողներից շատերը չգիտեն պլանը համատեղ կազմելու հնարավորության մասին:

6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդունում են որպես հիվանդ և անընդունակ:

7. Ուսուցիչների համար դասընթացների կազմակերպման պակաս:

Բացի ուսուցիչներին ներառական կրթության վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ տրամադրելուց, կարևոր են նաև մասնագիտական գիտելիքների զարգացումը: Աշխատելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ունեցող երեխաների հետ՝ հաճախ առաջանում են հարցեր, որոնց պատասխանները ուսուցիչները չունեն:

8. Ներառական կրթությունը պետք է սկսվի նախակրթարաններից:

Մինչև 6 տարեկանը երեխաներին տանն են պահում, հետո տանում դպրոց: Երեխաները հոգեբանական խնդիր են ունենում, նրանց համար ավելի դժվար է լինում ինտեգրվելը:

9. Դպրոցներում (ինչպես և հասարակության մի ստվար հատվածի մոտ) դեռ կա խտրական և կարծրատիպային վերաբերմունք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ:

Որպես հանդիպող դժվարությունների լուծում առաջարկվում է կիրառել սովորողների գործունեությունը ակտիվացնող կրթության տեխնոլոգիաները: Դրանց թվին են պատկանում ոչ միայն հաղորդակցական ուսուցման, այլև խաղային տեխնոլոգիաները, խմբային գործունեության ձևերը և այլն:

Ներառման պայմաններում ուսումնական գործընթացում տեխնոլոգիաների կիրառումը, ժամանակակից դիրքորոշումներից ելնելով, պահանջում է ոչ միայն կրթության բովանդակության և խնդիրների փոփոխություն և մի սերնդից մյուսին սոցիալական փորձի փոխանցում, այլև անձի զարգացման համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծում:

Ներառական կրթության տեխնոլոգիաները հիմնվում են հանրակրթության հայեցակարգերի հետևյալ դրույթների վրա:

Ամբողջականության սկզբունքի պահպանումը պահանջում է լրացուցիչ շտկողակրթական ծառայությունների կարիք ունեցող սովորողների յուրահատկությունների և հնարավորությունների ուսումնասիրում, մանկավարժության ու հոգեբանության զինանոցից վերցված բազմազան մեթոդների, հնարների ու միջոցների կիրառում:

Տեխնոլոգիաները կրթական ներառման պայմաններում ունեն հետևյալ բնութագրիչները.

- Նախագծվում, ընտրվում է հոգեֆիզիկական յուրահատկություններով սովորողի կրթության բովանդակությունը: Այն ազատվում է երկրորդական բաղադրիչներից: Դա թեթևացնում է սովորողների բեռնվածությունը,

հնարավորություն ընձեռում բազմակի անգամ անդրադառնալ ծրագրային նյութի գլխավոր և էական մասերին:

- Ներառման պայմաններում իրականացվում է կրթության հաղորդակցական բաղադրամասի ապահովումը: Իսկ դա ենթադրում է կրթական գործընթացի մասնակիցների փոխգործունեություն, մեկը մյուսի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի առկայություն, սոցիալական փորձի փոխանակում:
- Օգտագործվում են տարբերակված կրթական ծրագրեր, որոշվում են սովորողի կրթական երթուղին՝ հաշվի առնելով մի շարք գործոններ: Դրանցից են կենսամիջավայրը, ծնողների մանկավարժական կուլտուրան, սովորողների իմացական հնարավորությունները, ինչպես նաև օգտագործվող մեթոդական այն հնարները, որոնց կիրառումը երաշխիք է անձի զարգացման միջոց հանդիսացող կրթական միջավայրի ստեղծման համար:

Ներառական կրթական տեխնոլոգիաների յուրահատկությունն է՝ կրթական ընդունված համակարգերի և արտաքին միջավայրի հետ մշտական փոխգործունեության մեջ լինելը: Դա հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն գնահատել յուրաքանչյուր փաստն ու երևույթը, ընդունել այլ մարդկանց աշխարհը, հայացքները:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունների ու առկա դժվարությունների ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հնարավորություն տվեց առավել հստակ պատկերացում կազմել ներառական կրթության, ներառման քաղաքականության, այս ոլորտում հանրակրթական դպրոցների ձեռքբերումների, առկա դժվարությունների, բացթողումների և այլնի մասին:

Այս ամենից ելնելով՝ հանգեցինք հետևյալին.

Ներառումը մոտեցում է, որի դեպքում պետք է հաշվի առնվի աշակերտների բազմազանությունը, երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա և ուսումնական պլաններն ու նպատակները հարմարեցնել սովորողների ընդունակություններին ու պահանջմունքներին: Այս պրոցեսում կարևոր է ուսուցիչների, բազմամասնագիտական խմբի յուրաքանչյուր անդամի, ծնողների և նրանց դերը, ովքեր իրենց փորձն ու գիտելիքներն են ներդնում, որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանա սովորել իր համար առավելագույն օգուտով:

Արդյունքում ունենք հետևյալ առաջարկությունները.

- ներառական կրթության իրականացման մասնակից ցանկացած մանկավարժ հետևողականորեն վերլուծության ենթարկի իր կատարած աշխատանքի արդյունքը,
- մանրակրկիտ ուսումնասիրել առաջավոր երկրների փորձը և այն ներդնել՝ միայն մեր կրթական համակարգին հարմարեցնելով:

Այսպիսով, ներառական կրթության ճիշտ իրականացումը կբացառի երեխաների հանդեպ, իսկ ապագայում նաև ողջ հասարակությունում առկա խտրականությունների վերացմանը:

Ամփոփելով՝ նշենք, որ ներառական կրթություն իրականացնելիս յուրաքանչյուր դպրոցի նշանաբանը պետք է լինի հետևյալը. «Ներառական կրթության իրականացումը ոչ թե բարեգործություն է, այլ կրթության իրավունքի ապահովման հնարավորություն»:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի տեղեկատու, Երևան, 2009,
2. Հատուկ կրթություն, 1, Երևան, 2007,
3. Հատուկ կրթություն, 2, ՊՐԱԿ, Երևան, 2008,
4. Հովսեփյան Ա., Տողանյան Ն., Հովհաննիսյան Հ., Հարությունյան Ա., Հովհաննիսյան Դ., Ավագյան Ա., Մտավոր խնդիրներ ունեցող սովորողների հետ աշխատող հատուկ մանկավարժի ուղեցույց, Երևան, 2008,
5. Ներառական կրթության իրականացման ուղեցույց, Հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար, Երևան, 2008,
6. Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. – Երևան, 2018
7. Վարդանյան Ա. Լ., Հովսեփյան Ա. Ա., Մուրադյան Ա. Խ. «Մտավոր հետամնացություն ունեցող սովորողների սոցիալական հարմարումը և կրթական միջավայրում ներառումը», Ձեռնարկ հանրակրթական և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժների և ծնողների համար, Երևան, 2011:
8. https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166